... ԳՆՈՒՄ ԷՐ, ԿՌՎՈՒՄ ԷՐ, ՀԱՂԹՈՒՄ ԷՐ, ԳԱԼԻՍ ԷՐ

... «Գյուղն իմ լեռների գրկում ծվարած Գանձաքարն է: Բնության այս հրաշք անկյունում եմ ծնվել ու մեծացել: Դպրոցն ավարտելուց հետո ասացի բախտս փորձեմ «վերեւներում»: Ի՞նչ արած, չստացվեց, ու այդպես էլ համալսարանական չդարձա: Գուցե լավը հենց դա էր, ի՞նչ իմանաս: Երեւի զինվորական դառնալու համար էի ծնվել...»,- այսպես է սկսել ինքնակենսագրությունը «լեռնաստանի զավակը»: Իսկ վերջում «Մոռացա անուն, ազգանունով ներկայանամ. անունս Ռեմիկ է Ռեմիկ Սուրենի Մարդանյան»: Նույն ինքը «Ռեմրոն», նույնը, որ հաղթանակած բանակի լեգենդներից մեկն էր: Սակայն...

...Փորձում եմ գրել ու... մի տեսակ չի ստացվում: Հիշում եմ ուղիղ մեկ տարի առաջ էր հոկտեմբերի 8-ին Տանկիստի օրը հանդիպեցինք տանկային զորամասում: Անընդհատ պատմում էր, պատմում: Թեման սխրանքներն էին, հերոսապատում դրվագներ պատերազմից, բայց իր մասին ոչ մի խոսք...

... Երեք օր անց եղեգնածորից զանգեցին.

- Ձեր ձայնագրությունը մի ոչնչացրեք,- ասացին,- **վերջինն էր**: Մարդանյանն այլեւս չկա: Մահացել է ավտովթարից...

Ծնվել էր 1955թ. փետրվարի 16-ին, Իջեւանի Գանձաքար գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է Խորհրդային բանակ: Մեկ տարի ծառայելուց հետո ընդունվել է Նովոսիբիրսկի բարձրագույն ռազմաքաղաքական ուսումնարան: Ավարտելուց հետո ծառայել է տարբեր զորամասերում, այնուհետեւ ընդունվել եւ 1988-ին կարմիր դիպլոմով ավարտել է Մոսկվայի ռազմաքաղաքական ակադեմիան...

... «Թաքցնելու բան չունեմ,- շարունակում է:- Ամբողջ էությամբ նվիրվեցի զինվորական գործին: Ծառայում էի հեռուներում հայրենիքի ու հարազատ բնօրրանի կարոտը սիրտս իմ սրտում: Պայմաններս վատը չէին: Այնուամենայնիվ, չհամբերեցի: Դիմում գրեցի Հայաստանի ղեկավարությանը: Պատասխանը Հանրապետության նախագահի շնորհակալական նամակն էր: Երկրորդ անգամ դիմեցի: Եվ միջնորդագիրը օգնեց գործին: Ինքնուներկուսի մայիսին տեղափոխվեցի Հայաստան՝ ծառայելու նոր կազմավորվող հայկական բանակում» (1995թ. «Իջեւան» թերթ): Նույն տարվա հունիսին կամավոր մեկնում է Լաչինի մարդասիրական միջանցքը պաշտպանելու: Կատարած ռազմական ծառայությունների համար նրան արտահերթ շնորհվում է գնդապետի կոչում: 1992-ի նոյեմբերին նշանակվում է մոտոհրաձգային գնդի հրամանատար, մեկ ամիս անց նորաստեղծ առանձին մոտոհրաձգային բրիգադի հրամանատար: Բրիգադն իր անփոխարինելի ներդրումն ունեցավ Մարտակերտի ու Քելբաջարի ազատագրման ու պաշտպանության գործում, ապա Կուբաթլուի, Զանգելանի մարտական գործողությունների, իսկ 1994թ. հունվարից Հորադիզ-Ֆիզուլի ճակատի պաշտպանության ժամանակ...

1999թ. գնդապետ Ռեմիկ Մարդանյանը նշանակվում է Հայոց Բանակի մարտական գործողությունների բաժնի պետ, 2000թ. հունիսին բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ...

Սակայն շատ բան էր բաց թողել նա. իր ինքնակենսագրությունում գնդապետը չէր նշել, որ ինքը հրամանատար լինելով, շատ անգամ հասարակ զինվորի պես ավտոմատը ձեռքին կռվել էր, չէր նշել, որ 92-ի վերջին էլ-չիբեյը 60 մլն ռուբլի էր խոստացել նրա գլխի համար. «Մի թուրք սնայպեր աղջկա գերի վերցրինք,- պատմեց եղբայրը Ռազմիկը,- նա խոստովանեց... Ռեմիկին սպանելու էր եկել...»: Մի՞թե դյուցազնավեպի շարունակությունը չէր... Սասնա Ծռերից մինչեւ Ֆիդայիներ... մինչեւ նոր հերոսապատում... Ապացո՞ւյց. «Խի՞ քեզ գյուլլա չի դիպչում»,- զարմանում էին շատերը: Բայց չէ, դիպել էր, ուղղակի Ռեմիկը սովոր էր պայքարում հաղթել:

... Բաց էր թողել նաեւ այն, որ 93-ին Սովետաշենից բեռը շալակին ոտքով գնացել էր Մասիսի խաչմերուկ (մոտ 10 կմ մեն-մենակ), որտեղից էլ պատահական մեքենայով դեպի Արցախ... Մեքենա չուներ: Չէր սիրում: Իրեն պետք չէր: Սպիտակ ձի ուներ: Ու դրանով էլ շրջում էր: Սպիտակ ձիավորը գնում էր, կռվում էր, հաղթում էր ու գալիս էր...

- Ինքը ռիսկով մարդ էր,- շարունակում է եղբայրը,- **ո՛չ գյուլլից էր վախենում, ո՛չ թուրքից: Իրա կռիվը պարտք չէր հայրենիքի հանդեպ, այլ վրե՛ժ, սրտիովանք: Վրեժ էր ազգի, նրա արյունաներկ պատմության համար: Բնածին հայրենասեր էր: Դեռ դպրոցում ծովից ծով Հայաստանի ողջ պատմությունն ու աշխարհագրությունը հինգ մատի պես գիտեր...**

... Նվիրական երազանք ուներ լուծել իր ազգի վրեժը, գերությունից ազատել Մասիսը, հայոց հողը: Մի տեսակ թախիծով ու կարոտով էր երազում, կարծես տեսել էր, ապրել այնտեղ: Ասում էր «Գոնե ինձ թույլ տան ես գնամ... էլ ոչ մեկ գործ չունի: Մենակ ինձ թույլ տան: Ոչինչ չեմ ուզում. ոչ հաց, ոչ զենք: Ամեն ինչ ձեռք կբերենք կռվում, կազատագրենք բոլորը, մենակ թույլ տան իմ բրիգադով գնամ...»: Ու վստահ էր հաղթանակին: Գիտեր, թե ով է իր դեմ կանգնած, երբ հարցնում էին պատերազմում իր կատարած գործերի մասին, չորս բայերով էր բնութագրում ամեն ինչ. նշանաբան էր դարձել. «Գնում ենք, կռվում ենք, հաղթում ենք, գալիս ենք»:

Ուրիշ երազանք էլ ուներ հայրենիքը. բանակը հզոր լինեն, իր զինվորը հոգսեր չունենա, հայ ազգի տխրությունը ժպիտի փոխվի: Ցավ էր ապրում, որ տխուր էր հայը: Ասում էր. «Մենակ երջանիկ չեն լինում, ազգովի երջանիկ լինենք, միասին լինենք»: Գիտեր, որ վախով հայրենիք չեն պահում. «Վախկոտը թաքնվելու է... պիտի ռիսկով լինել: Պատերազմը ռիսկ է սիրում: Վախեցար տանուլ կտաս»:

... Սիրում էր զինվորին, ապրում նրա հոգսերով (իր երիտասարդ զինվորներից երկուսին, որոնց շատ էր սիրում, սպանեցին: թուրքերը. փոխարենը չորս թուրք սպանեց). Գտնում էր, որ զինվորը պետք է ամեն ինչ իմանա, հատկապես, երբ խոսքը հայրենիքին է վերաբերում: Նրա էությունը պետք է ներծծված լինի ռազմական ոգով: Զինվորին հրամանատարը պիտի ոգեշնչի,- համոզված էր նա: Ու նրան շատ էին սիրում զինվորները: Ասենք ոչ միայն նրանք. միշտ եւ ամենուր նրան սիրել, հարգել են ազնվության, անկեղծության, պարզության, ճշտապահության, անմիջականության համար: Ռուսական բանակում էլ նա հարգանք էր վայելում: Իբրեւ հայրենասեր ու ճշտապահ սպա: Իր համար չէ, բոլորի համար էր ապրում: Ինքնատիպ դիմելածեւ ուներ «ջիգյար»: Ամենավիրավորական խոսքն էլ «Ա. էշ նկարող» դարձյալ ինքնատիպ էր:

... Նրա համար թանկ էր իր հայրենիքի յուրաքանչյուր բեկորը. Իջեւանում էր ծնվել, բայց շատ էր սիրում Զանգեզուրը (իր պայքարը Սյունիքում սկսվեց, Սյունիքում էլ ավարտվեց, ավա՜ղ...), այրվում էր Գիգիր-հայրենիքի սեր-կարոտով: Չէր հանդուրժում, երբ արցախցու հասցեին որեւէ վատ բան էին ասում...

Դեռ 1985-86-ից ակադեմիայում ուսանելու տարիներից էր կանխատեսո՞ւմ, թե՞ կանխազգում Արցախյան շարժումը: Հայրենաշահ ծրագրեր ուներ, նպատակներ... Ավա՜ղ...

Չէ, հաստատ վախեցավ ճակատագիրը: Վախեցավ, որ մի հայ գնդապետ, Ռեմիկ Մարդանյան անուն-ազգանունով, կարող է հաղթել իրեն, կարող է ձեռք բերել թույլտվություն իրականություն դարձնել երազանքը: Վախեցավ եւ ուզեց չար կատակ խաղալ... Ավա՜ղ...

Եռաբլուրն է դարձել հանդիպման մշտական վայրը: Ու այնտեղ է նա, բյուր քաջերի կողքին: Ձենց նրանք անմահացյալներն են հաստատում, թե երազանքը Հայոց կիսատ չի մնա:

Բաժնի նյութերը՝ Հայկանուշ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ